չայ նուաճեալ զլեռնական ապստամբս 'ի կողմանս Սամարիոյ, 'ի նմին աւուր եհաս յԵրուսաղէմ և բանակեցաւ արտաքոյ քաղաքին, յաւուրս ծոմապահութեան նոցին, եւ զգերեալսն արդել կապանօք 'ի բերդն։ Գնացին առ նա յայցելութիւն ըստ սովորութեան Փոխանորդք և Թարգմանք երից ազգաց, և նորա սիրով ընկալեալ դարձոյց ըզնոսա 'ի տեղիս իւրեանց։ Եւ զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն զԱւետիս Թարգմանն Հայոց, և եդ առաջի նորա զառաջին սպառնալիս եւ զբարկութիւն Կուսակալին վասն չանսալոյ հրամանաց նորին, և այժմ քանդել եւ աւերել զգործս Մննդեան և Ս. Աստուածածնի, Հայք կրեցին բազմադիմի տառապանս վասն այսր, զի 'ի դերեւ ելին յուսադրական բանք Փոխանորդին և Գլխաւորաց ազգին, զի բռնաւորն չունէր երբէք երկիւղ ինչ և կամ ակնառութիւն յումեքէ. նմին իրի երթային և դային առ նա միաբանք 'ի գիշերի և 'ի տունջեան, և զկնի բաղում աղաչանաց եւ տուն նմա և սակս հաշտութեան Բդեշխին և Քաղաքապետին դահեկանս 145,000 և հազիւ զերծան 'ի ձեռաց նորա։ Մինչեւ ցաստ Ս. Յարութեան Ս. Աստուածածնի, և Բեթղեհէմի բովանդակ ծախուց դումարն եհաս 899,564 դահեկան միայն յԵրուսաղէմ, բաց 'ի ծախուց որք եղեն 'ի ձեռն Փոխանորդին Կոստանդինուպօլսոյ, այլ մեք թողեալ զայսոսիկ տեսցուք թէ զինչ գործեցին Լատինք 'ի Բեթղեհէմ։

Լատին կղերք ոչ երբէք յանձն առին դադարիլ 'ի խըռովութենէ և յատելութենէ ընդդէմ Հայոց, արհամարեալ զպատուէր Դատաւորին աներկիւղ և համարձակ գործէին զամենայն ինչ, զի յետ մեկնելոյ փոխանակի Բդեշխին յԵրուսաղէմ՝ յարուցին զայլ իմն խնդիր նոր 'ի Բեթղեհէմ. սկսան աւել ածել 'ի ճանապարհն որ 'ի մէջ եկեղեցւոյն։ Հայք գնացին առ Դատաւորն, կոչեաց նաեւ զՅոյնս, այլ նոքա հրաժարեցան 'ի կռուոյ անտի. և ինքն յայտնապէս ասէր ցբազմականս թէ՝ կամք Լատինաց ոչ միայն վասն աւելածութեան և ճանապարհին է, այլ վասն ամենայնի, զի եթէ այսօր հրաման տացուք աւելելոյ, վաղիւն ստիպեն բառնալ զկանթեղս, սակայն պատուէր ունիմ 'ի Կոստանդինուպօլսոյ ոչ եղծանել ինչ 'ի սահմանելոցն Մուվէլլա-